



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1  
Էլ.փոստ [musalerhamaynq@mail.ru](mailto:musalerhamaynq@mail.ru)  
Հեռ. 0231 6-47-22

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«12» դեկտեմբերի 2016 թվականի N92 -Ն

ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի գործունեության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքային կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

|                      | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|----------------------|----------|---------|-------------|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ        |          | _____   | _____       |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ      |          | _____   | _____       |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ        |          | _____   | _____       |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ     |          | _____   | _____       |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |          | _____   | _____       |
| ՌՈՐԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ      |          | _____   | _____       |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ     |          | _____   | _____       |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ         |          | _____   | _____       |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ  |          | _____   | _____       |





ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՏՐԱՂԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԱՌԵՎՏՐԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Համայնքի տարածքում առևտուրն իրականացվում է առևտրի օբյեկտներում՝ խանութներում, կրպակներում, տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կետերում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում, բացօթյա առևտրի վայրերում և շրջիկ առևտրի կետերում:
2. Սպառողի /գնորդի/ կողմից գնված պատշաճ և ոչ պատշաճ ապրանքների փոխանակում կամ դրանց համար վճարված դրամի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
3. Տոնավաճառներ կազմակերպվում են համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:
4. Համայնքի տարածքում դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման կամ վերադարձման:
5. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում է հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջղիրի պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը, մեկ կիլոգրամի արժեքը և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանելիության ժամկետը:
6. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի, հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում, առանձնացված տաղավարներում, կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում, իսկ մանր կշռափաթեթավորված հատային ապրանքների, նաև շրջիկ առևտրի միջոցով:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Հանրային սնունդը՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման, սպառման

խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա ապրանքների վերջնական գինը:

III. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Կենցաղային ծառայությունը սպառողների կենցաղային կարիքների բավարարման համար՝ նրանց պատվերով կատարողի կողմից մատուցվող ծառայություն է:
2. Կենցաղային ծառայության օբյեկտներում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:
3. Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը և ձևը որոշում է կատարողը:

Աշխատակազմի քարտուղար



Գ. Սայադյան